

եան եւ արդարութեան սկզբունքներով: Այս կանոնները, մասնակիցներուն համար, պէտք է ներհայեցողութեամբ (Intuitive), ինքնաբերաբար հասկնալի ըլլան: Այլ խօսքով, այս կանոնները պայմանագրութեամբ մը չեն ներկայա-նար, այլեւ՝ որպէս *նախապայման* կամ *նախահամարում* (Presupposition), որոնց խախտումը կամ զանցառումը՝ որոշ հակասութիւններու կ'առաջնորդէ (ինչպէս պիտի տեսնենք):

Քննախօսութիւն մը յաջող կը համարուի, եթէ անոր բոլոր մասնակիցները, միաժամանակ՝ ճշմարտացի ու վստահելի ըլլան.

- **ճշմարտացի**՝ այն իմաստով, որ մասնակիցներու արտայայտութիւնները իրենց դիտաւորութեան համապատասխան են. իսկ
- **վստահելի**՝ այն իմաստով, որ մասնակիցներու արտայայտութիւնները տեղ գտնեն իրենց վարուելակերպին մէջ:



Քննախօսութեան բարոյագիտութեան սկզբունքները

Հաբերմաս, *քննախօսութեան բարոյագիտութեան* որպէս հիմունք, կը ներկայացնէ երկու հիմնական սկզբունքներ, որոնց այս տեսութեան համար ունեցած կարեւորութիւնը, կարելի է համեմատել՝ Կանտի պարտագիտական տեսութեան, *անպայմանական հրամայականին* հետ (Categorical Imperative): Յիշենք այդ երկու սկզբունքները.-

- *Քննախօսութեան սկզբունքը* (Principle of Discourse) կրճատ՝ „**D**” եւ
- *Ընդհանրականացման սկզբունքը* (Principle of Universalization) կրճատ՝ „**U**”

1. Քննախօսութեան սկզբունքը

Քննախօսութեան սկզբունքի („D”) համաձայն, բարոյական կանոնները վաւերական կ'ըլլան, միայն այն ժամանակ, երբ անոնք քննախօսութեան գործնական ընթացքէ անցնելով, բոլոր մասնակիցներուն կողմէ համաձայնութեամբ կը կնքուին:

Հաբերմաս, քննախօսութեան սկզբունքը („D”) տակաւին կը բաժնէ երկու հիմնական մասերու.-

Ա.- **Բարոյականութեան սկզբունքը** (Principle of Moral),

որու համաձայն անհատը պէտք է ընէ, ինչ որ բոլորին համար հաւասարապէս *բարի* է: Այս սկզբունքը կը կիրարկուի միայն բարոյական կանոններու ու հարցերու վրայ. եւ

Բ.- **Ժողովրդավարութեան սկզբունքը** (Principle of Democracy),

որ կը կիրարկուի այնպիսի կանոններու վրայ, որոնք առնչուած են իրաւաբարոյական կամ քաղաքաբարոյական ոլորտներուն, ուր միայն «բարոյա-